ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա Ր Ա Ր Ա Տ Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N ԱՐԴ99-2022

ք.Արտաշատ

„10„ 03 2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ՎՏԱՆԳԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով, գարնանային հեղեղումների, սելավների վտանգի նվազեցման, դրանց կանխարգելման աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի հեղեղավտանգ և սելավավտանգ տարածքներն ուսումնասիրելու, համապատասխան համայնքների կողմից կանխարգելիչ աշխատանքները վերահսկելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի N 1-ի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին հանձնարարել՝

1) մինչև 2022 թվականի մարտի 15-ն ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի հեղեղավտանգ և սելավավտանգ տարածքները՝ համաձայն հավելվածի N 2-ի և մինչև 2022 թվականի մարտի 20-ը ներկայացնել առաջարկություններ՝ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու համար.

2) առաջարկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի սելավավտանգ գոտու համայնքների ղեկավարներին՝

ա. 2022 թվականի մարտի 10-ից իրականացնելու հեղեղատարների վտանգավոր հատվածներում կանխարգելիչ միջոցառումներ.

բ. հեղեղումների սպառնալիքի կամ վտանգի դեպքում համայնքի վտանգավոր տեղամասերում իրականացնել հնարավոր հետևանքների նվազեցման

միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում կազմակերպել բնակչության և նյութական արժեքների տարահանում.

3) հավաքագրել ու վերլուծել Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեներով այս ուղղությամբ իրականացված աշխատանքների և միջոցառումների ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը և, ըստ անհրաժեշտության, դրանց մասին տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչությանը և համապատասխան շահագրգիռ կառույցներին.

4) ապահովել սույն որոշման իրազեկումն ըստ առնչության:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Восстановимая подпись

X

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՐՏԱՎԱԶԴ

Подписано: NAZARETYAN ARTAVAZD 2409881092 Ա. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզպետի
2022 թվականի մարտի 10 -ի
N 99 որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

1.Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի տեղակալ՝ Վլադիմիր Խաչատրյան:

2.Աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալներ՝

1) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանիգյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Հայկազ Տերտերյան

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ Հայրապետ Սարգսյան:

3.Աշխատանքային խմբի անդամներ՝

1) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ Աշոտ Սարգսյան:

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ մասնագետ Հարություն Կարապետյան:

3) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի գլխավոր ճարտարապետ Վարդան Այվազյան:

4) Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի վարչական ղեկավար Սերժիկ Բաբայան:

5) Արտաշատ համայնքի Նշավան բնակավայրի վարչական ղեկավար Մյասնիկ Հովհաննիսյան:

6) Արտաշատ համայնքի Դեղձուտ բնակավայրի վարչական ղեկավար Յուրիկ Մուրադյան:

7) Արտաշատ համայնքի Ազատավան բնակավայրի վարչական ղեկավար Պետիկ Ղազարյան:

8) Արտաշատ համայնքի Վերին Արտաշատ բնակավայրի վարչական ղեկավար Աշոտ Ղազարյան:

9) Արտաշատ համայնքի Նարեկ բնակավայրի վարչական ղեկավար Գոռ Ամրոյան:

10) Վեդու համայնքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Հայկազ Նազարյան:

11) Վեդի համայնքի Վանաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գոռ Խաչատրյան:

12) Վեդի համայնքի Եղեգնավան բնակավայրի վարչական ղեկավար Դավիթ Մեհրաբյան:

13) Վեդի համայնքի Այգավան բնակավայրի վարչական ղեկավար Արամ Շիրինյան:

14) Վեդի համայնքի Տափերական բնակավայրի վարչական ղեկավար Կարեն Խաչատրայն:

15) Արարատի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Մովսես Սավոյան:

16) Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական ղեկավար Արգամ Զաքարյան:

17) Արարատ համայնքի Արմաշ բնակավայրի վարչական ղեկավար Սամվել Նահապետյան:

18) Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական ղեկավար Ռադիկ Օղիկյան:

19) Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամայիս Հարությունյան:

20) Մասիս համայնքի Սայաթ-Նովա բնակավայրի վարչական ղեկավար Լևոն Սերոբյան:

21) Մասիս համայնքի Ռանչպար բնակավայրի վարչական ղեկավար Վահամ Վարդանյան:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա. ՄԿՐՏՉՅԱՆ**

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզպետի
2022 թվականի մարտի 10 -ի
N 99 որոշման

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի հեղեղավտանգ և սելավավտանգ տարածքներ

Հ/Հ	Համայնքի անվանումը	Աշխատանքների կատարման օբյեկտը	Վտանգավոր հատվածներում կատարվող աշխատանքներ	Նշումներ
1.	Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայր	Արաքս գետ	N 11/1 և 11/3 սահմանային նիշի մոտ ափի ամրացում	
2.	Արարատ համայնքի Երասխ բնակավայր	Արաքս գետ	Ափապաշտպան թմբի բարձրացում 1մ, տեղ-տեղ անհրաժեշտ է ալիքապաշտպան հողաշերտի առկայությունը	
3.	Արարատ համայնքի Արմաշ բնակավայր	Արաքս գետ	Ափապաշտպան թմբի բարձրացում 1մ, տեղ-տեղ անհրաժեշտ է ալիքապաշտպան հողաշերտի առկայությունը	
4.	Արտաշատ համայնքի Բյուրավան բնակավայր	Ազատ գետ	Գետի հունի մաքրում՝ շուրջ 500մ ափապաշտպան հատվածների ամրացում գաբիոններով շուրջ 100մ	
5.	Արտաշատ համայնքի Դեղձուտ բնակավայր	Ազատ գետ	Գետի հունի մաքրում՝ շուրջ 1000մ ափապաշտպան թմբի վերականգնում՝ շուրջ 100մ վտանգավոր հատվածների գաբիոնապատում շուրջ 280մ	

6.	Արտաշատ համայնքի Բուրաստան բնակավայր	Ազատ գետ	Գետի հունի մաքրում՝ շուրջ 2000մ 5-րդ ուղեկալի տարածքում ափապաշտպան հատվածների ամրացում գաբիոններով շուրջ 200մ	
		Հրազդան գետ	Աջակողմյան ափի գաբիոնա-պատում շուրջ 400մ	
7.	Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայր	Կախանովի ջրանցք	Ափապաշտպան թմբի ամրացում շուրջ 1000մ և բարձրացում 1մ (4-րդ ուղեկալի տարածք)	
8.	Արտաշատ համայնքի Վ.Արտաշատ բնակավայր	Նորաշեն-Վ.Արտաշատ-ք.Արտաշատ սելավատար	Հունի մաքրում շուրջ 600մ	
9.	Արտաշատ համայնքի Բյուրավան-Նշավան բնակավայրեր	Փամբուկ-Դարա սելավատար	Հունի մաքրում 300մ	
10.	Արտաշատ համայնքի Նարեկ, Քաղցրաշեն, Այգեզարդ, Այգեպատ բնակավայրեր	Նարեկի սելավատար	Հունի մաքրում շուրջ 3000մ և ափերի ամրացում գաբիոններով շուրջ 400մ	
11.	ք.Արտաշատ	Արտաշատի	Հունի մաքրում շուրջ 500մ	

		սելավատար		
12.	Արտաշատ համայնքի Ն.Դվին բնակավայր	Ն. Դվին սելավատար	Հունի մաքրում շուրջ 500մ	
13.	Մասիս համայնքի Սայաթ-Նովա բնակավայր	Հրազդան գետի ձախակողմյան կոլեկտոր	Կոլեկտորի հունի մաքրում՝ շուրջ 500մ ձախակողմյա թմբի բարձրացում 1մ	
14.	Մասիս համայնքի Սայաթ-Նովա բնակավայր	Հրազդան գետ	Համայնքների հարևանությամբ գետի մեջ ընկած երկաթյա կամուրջի գետից դուրս բերում, գետի ձախակողմյա թմբի ամրացում շուրջ 200մ	
15.	ք.Վեդի	Վեդի գետ	Գետի հունի մաքրում՝ շուրջ 2000մ շրջված երկաթբետոնյա պանելների տեղադրում և ամրացում	
16.	Արարատ համայնքի Ավշար բնակավայր	Վեդի գետ	Գետի հունի մաքրում շուրջ 700մ և ափերի ամրացում	
17.	Վեդի համայնքի Վանաշեն բնակավայր	Վեդի գետ	Գետի հունի մաքրում շուրջ 500մ և ափերի ամրացում	
18.	Արարատ համայնքի Եղեգնավան բնակավայր	Վեդի գետ	Գետի հունի մաքրում և ափերի ամրացում՝ շուրջ 900մ	
19.	Արարատ համայնքի Այգավան	Վեդի գետ	Գետի հունի մաքրում և ափերի ամրացում՝ շուրջ 300մ	

	բնակավայր			
20.	Վեդի համայնքի Տափերական բնակավայր	Շահումյան-Տափերական սելավատար	Հունի մաքրում 400մ	
21.	Մասիս համայնքի Ռանչպար բնակավայր	Սև Ջուր գետ	Հունի մաքրում 2000մ	

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա. ՄԿՐՏՉՅԱՆ**